ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 60
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0005 ք.Երևան Տիգրան Մեծի 42, հեռ.(+37410) 55-00-70, էլ.փոստ yerevan60@schools.am

No 22/70 «07» սեպտեմբերի 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԱԳԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաֆարյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Երևանի Վ.Տերյանի անվան հ60 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում հայտարարվել է մրցույթ ֆիզիկայի /6 ժամ/, պատմության /6 ժամ /, հայոց լեզու և գրականության /7 ժամ /, անգլերենի /4 ժամ/, մաթեմատիկայի /5ժամ/, տեխնոլոգիայի /13 ժամ, տղաների խմբի համար/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Կից ներկայացնում ենք հայտարարությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ **Ա.ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ**

Կատ.՝ Ն.Թարայան
Հեռ.010550070

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ «Երևանի Վ.Տերյանի անվան հ60 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (6դասաժամ), պատմության (6 դասաժամ), հայոց լեզու և գրականության (7 դասաժամ), անգլերենի (4 դասաժամ), մաթեմատիկայի (5 դասաժամ), տեխնոլոգիայի (13 դասաժամ՝ տղաների խմբի համար) ուսուցչի թափուր տեղ/երի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 7-ից մինչև 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. սեպտեմբերի 23ին՝ ժամը 14:30-ին, Վ.Տերյանի անվան հ60 հիմնական** դպրոցում, հասցե՝ Տիգրան Մեծի 42: Տեղեկությունների համար զանգահարել 010 55 00 70 հեռախոսահամարով: